

# ՈՒՐՈՒԱԳԻՇՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԹԷՌՈԴՈՍԻԱ-ԿԱՖԱ. ՔԱՂԱՔԻՆ ՏԱՒՐԻՈՅ

## ԵՒ ԱԶԳԻՍ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

### ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱԻԱՅԻ

(Տես յ'էջ 71.)

Կաւայի հին պատմութիւն՝ անմիջական վերաբերութիւն ունի նախնոյն Տաւրիկեան Քերառնեսի անցից և մասամբ նաև առասպելապատում տանդութեանց հետ։ Հաւանականաբար Քրիստոսի թուականէն չորս հարիւր տարի յառաջ՝ յոնիական գաղթականութիւնը եկած են այն կողմերը, հաստատուիլ բնակութեամբ և վաճառականութեամբ ի գաւառան որ ի ժամանակին՝ ծանօթաշխարհի հիւսիսածայրն համարուած էին, իրենցմէ յառաջ, թերակղզւյն, ինչպէս նաև չորս կողմի գաւառաց բնակիչքն համարուած են Սկիւթացիք։ Պլինիոս և Ստրաբոն կ'աւանդեն թէ Տաւրիկեան թերակղզին ի ծովէ երած է, և երկու հազար տարի յառաջ քան զհասարակաց թուականն՝ Ասիոյ Տաւրոս լերանց կողմանէ հոն գաղթած ժողովրդեան պատճառաւ Տաւրիկէ կոչուեր է. իսկ այլք Դիոգորի սիկլիփացւոյ հետ կը համարին թէ զանգան ժողովուրդք ի վաղնջուց հոն հաստատած ըլլան իրենց բնակութիւնը և Սկիւթացիք կոչուած, որ ընդհանուր անուն մ'է կիմերեանց և նոյն կողմերն եղող ուրիշ ժողովրդոց։

Նիւթերնէս դուրս է պատմական—ազգագրական խնդրովք ըգրադիլ և զբաղեցընել։ Յիշեցընենք միայն թէ առասպելք՝ Սկիւթացւոցմէ յառաջ ալ ուրիշ ազգ մը կը դնեն այն կողմերն, ըստն

կիմմերեանքը, սոսոյդ կամ առասպելական, որոց նախկին բնակութիւնն էր ըստ քերթողաց՝ հիւրատեաց և տիւրագին գաւառ մը, խիտ առ խիտ անտառօք և արեգական ճառագոյթից անթափանց մշտնջենաւոր միգով և մառախորով պատաճ: Հալածեալք ի Սկիւթաց ի կիմմերեան Վոսփորէ, ելան ի խնդիր նորոյ բնակութեան. և ընդ Եւքսինեանն անցնելով ի Պոնտոս, մերձաւոր ազգաց և ժողովրդոց վրայ ինկան ահաւոր արշաւանօք, և ըստ չերոդոտեայ՝ յարձակելով ի Փոքրն Ասիա, տիրեցին կիւրասարայ թագաւորութեան. ուր քսաննեութ տարի իշխելով՝ վերջապէս հալածուեցան յԱլիադէս թագաւորէն Լիւդիոյ:

Ժաւրիկեան թերակղզւոյն նախնական ժամանակաց կը վերաբերին Եւքսինեանն Պոնտոսի այլ և այլ քաղաքներն, որ վաճառականական և քաղաքական պատմութեան մէջ կարեւոր և ազգեցիկ դեր մը ունեցան. ասանկ՝ Պանտիկապէտ (այժմու Կերջ), Թէոդոսիա (կաւա կամ Քէֆէ միջին դարուց), Քերսոն՝ որոյ գիրքը հիմակուան Սեւաստոպոլի մօտերն կ'իյնայ:

Ժամանակ անցնելէն եսքը՝ Պանտիկապէտ, որ Վոսփորոս սկսեր էր կոչուիլ՝ նեղուցին վրայ ունեցած դրիցը պատճառաւ, յոնիական փոքրիկ թագաւորութեան մը աթոռ եղաւ, ու կամաց կամաց տարածեց ընդարձակեց իր իշխանութիւնն րովանդակ Քերսոնեսի. և Եւքսինեան ծովու հիւսիսակողման գաւառներու վրայ, ուր բազումք յիշխողաց սկսիթացի ծագումն ունէին:

Մեծ ու զգալի եղաւ յոյն գաղթականութեանց քաղաքակիրթե բարերար ազգեցութիւնն այն կողմերու վայրենի բնակչաց վրայ. որով հին ժամանակաց բարք և սովորութիւնը կրեցին իրենց կերպարանափոխութիւնը, նոյն իսկ իրենց կրօնական պաշտամանց մէջ մոցընելով յոնական դիցարանութիւնը. կրթութիւնն և ուսումն ալունեցան բաւական յառաջադիմութիւն: Վոսփորացիք Ժաւրիոյ արևելեան կողմերը տարածելով իրենց իշխանութիւնը, շինեցին և բարգաւաճ ըրին դՊանտիկապէտ յիւրապակողման. իսկ ի կողմի Ասիոյ կանդնեցին միւս այլ քաղաք՝ զՓանակորիա: Միլեսացիք՝ Թէոդոսիա քաղաքին հիմնարկութիւնն ըրին, և այնչափ զօրացան՝ որ յաջողեցան վանել զՄոթիրոս թագաւոր Վոսփորի: Բայց Յունաստան ի կէս թ գարու (նախքան զթր.), կորսնցնելով իւր անկախութիւնը, Հոռվմայեցւոց մեծազօր պետութեան մարդ կը լինի. տակաւ կը սկսին պանտական պատերազմունք. պատմական մեծ մարդք, Միհրդատ Եւպատոր (յ՛Ա. գարու նախքան զթր.) ամուր թումր կը կանգնի հոռմէական հեղեղաց դէմ, և չի թողուր նոցալէդոնաց անարդել ոսնակոխ անել իւր աշխարհը:

Սկիւթացիք յարմար ժամանակ գտնալով, իրենց արօրագիր

խոփերը ի սուր և ի սուխն կը ձուլեն . և Թէոդոսիոյ վաճառականութիւնը առ ժամանակ մի կանգ կ'աւնու :

Միհրդատ մէկ կողմանէ՝ քաջապէս յետ կը մղէ Հռովմայ մեծանուն զօրավարները Սիլլա , Լուկուլլոս և Պոմպէոս . և միւս կողմանէ , իր Գիտիանդոս զօրավարին ձեռքով կը ջախջախէ Սկիւթացւոց ապստամբութիւնն , և Քերառնեսեան հասարակապեսութիւնը , հանդերձ Վոսպորեան թագաւորութեամբ , Քերառնիսիւ , Պանտիկապէիւ և վաճառաշահն Թէոդոսեաւ , իւր Պոնտական թագաւորութեան մարզ կը կացուցանէ առաջին գարուն սկիզբը նախքան դի՞ր :

Սակայն Պոնտացւոյն փառքը չի տեել երկար . Հռովմայ քաջախոյեանը , յաղթողն Սկիւթացւոց , Քերառնեսեան հասարակապեսութեան և վոսպորեան թագաւորութեանց նուածողը , Եւպատոր , իւր անարժան որդւոյն Փառնակի դաւաճանութենէն ընկճեալ կը զրաւի ի կենաց , և անոր ընդարձակ պոնտական թագաւորութիւնը Հռովմայ զինուց ներքե կը նուածի :

Թէոդոսիոյ վաճառաշահութիւնը Հռովմայեցւոց կառավարութեան ներքե ևս կը բարդաւածի . նա իւր ապրանքները , նաւերով մինչե 'ի Հռովմ' կը հասցընէ , ինչպէս տաւրիացի տաւարաց համեղաճաշակ միսը , փոքրիկ տակառներու մէջ ամփոփելով , որոց ամէն մէկուն գին 400 արծաթի գենար վճարելով , Հռովմայեցի սիրարեանք ախորժելով կը ճաշակեն<sup>1</sup> :

Այլ միւս կողմանէ , որովհետեւ Թէոդոսիա թատերատեղի կը դառնայ դրացի ազգաց խիզախմանց , վասն որոյ նորա վաճառականութիւնը ժամանակ առ ժամանակ կը վնասի :

Հռովմայեցիք առաւել համակրութեամբ կը վարուին Քերառնիսացւոց հետ , զի նորա արդէն հաստուած են Հռովմայեցւոց , և բարբառով և քաղաքակրթութեամբ մերձաւոր : Պանտիկապէանախանձու աչօք կը նայի Քերառնիսացւոց վերայ , որոյ հետևանք կը լինին արիւնահեղ կոիւներ , Թէոդոսիոյ պարապաց ներքե , որ այդ երկու քաղաքաց մէջ աեղը կ'ինկնայ : Սկիւթացիք ևս խառնուելով Քերառնիսացւոց և Պանտիկապէի կռուոց մէջ , ոչ թէ միայն Թէոդոսիոյ վաճառաշահութեան , այլ առ հասարակ Տաւրիոյ մշակութեան և յառաջադիմութեան արգել և վնաս կը լինի :

Ի վերջ կոյս առաջին՝ և ի սկիզբն երկրորդ գարու փրկչական թուականիս , կը սուրան ի Թէոդոսիա , ընդ Տաննայիս գետ , ասիական Ալան կոչուած բարբարոս ժողովուրդը , և Թէոդոսիոյ պարսպաց հետ , հիմն ի յարե կը կործանեն նորա վաճառականութիւ-

<sup>1</sup> Montesqieu, Esprit des Lois, Livre VII. Chap. I

նը : Հաւանականաբար այս միջոց ժամանակին համար է Նիկոմիդիոյ հրամանատար Արխանոսի գրածը, որ կը կոչէ զԹէոդոսիա «Քարոքանդ քաղաք, որոյ պատմութիւնը յիշատակարանաց մէջ խնդրելի է » :

Այս յիշատակարանիս վերայ հիմնեալ, ոմանք ի գիտնոց, թէոդոսիոյ հին պատմութիւնը աւարտեալ կը համարին . այլ մի նորագիւտ արձանագրութիւն, քանդակուած մարմարին սիւնի վերայ, կը ծանուցանէ որ՝ եղած է ի թէոդոսիա, ի ժամանակա թագաւորութեան վոսվորի Տիբերեայ – Յուլիայ Տէյրանոսի «Պաշտօնեայ արքայի և վերակացու »<sup>1</sup>:

Աստի մեք կը մակարերեմք . թէոդոսիա՝ Քերասոնիսեան և Վոսվորեան խիզախմանց միջոց, եղած է ոտնակոխ և յԱլանաց քարոքանդ՝ առ ժամանակ մի, այլ սակաւ յետոյ գարձեալ գլուխ վերցուցած է, շնորհիւ իր աշխարհագրական գրից, երբ (այն է 200 թուին միջոցները) Գոթացիք հալածական կը վարեն ի թէոդոսիոյ զԱլանները : Նոյն միջոցներուն Սարմատացիք ևս, կիմմերեան (Ենի – քալէ) նեղուցէն մոնալով ի Տաւրիա կը տիրեն Պանտիկապէի . և կը սկսի երկրորդ հարստութիւն վոսվորեան թագաւորութեան : Կը փութան Հռովմայեցիք Սարմատացւոց ինքնիշխանութեան առջեւ առնուլ ի Տաւրիա . 303ին կոստանդին Խորոս, Գիոկլետիանոս կայսեր զօրավարը, Քերասոնիսացւոց օգնութեամբ կը նուաճէ զՍավրոմատ Ը, Սարմատացւոց թագաւորը : Նորա յաջորդը, Սավրոմատ Թ, թէոդոսիոյ սահմանագրլիսյն վերայ կը զբաւի ի կենաց մենամարտելով մի քերանիսացի շահատակի հետ : Յերկրորդ կէս Դ գարու, գարձեալ կը յիշուի մի թագաւոր Վոսվորի՝ Սարմատացի ազգաւ, Ասսանդրոս Բ անուամբ . որոյ իշխանութեան միջոց, այն է 375 թուին, հեղեղաբար կը սուրան յԱսիոյ Հոնք, նշանաւորը ի պատմութեան, իւրեանց քանդիչ բնաւորութեամբ, որը և վերջ կու տան վոսվորեան թագաւորութեան, կործանելով տաւրիացի շինանիստ քաղաքները : Այդ բարբարոսաց հարուածներուն ներքեւ շինելուփառ կը կործանի վաճառաշահն թէոդոսիա, և կը մնայ երկար ժամանակ, նախ Ալանաց, ապա Գոթացւոց և հուսկ Հոնաց դերբուկներուն ներքեւ, մինչեւ որ գան մաքրելու նորա ափունքը շահավաճառ և օգտածարաւ Հայ և Գենուացի վաճառականք :

1 Այս սիւնը գտնուած է ի Կերջ 1843ին :

Ա լ ի շ ա կ ա յ ո ւ թ ի ի ն կ ա կ ի լ զ ի

Աւերակաց ներքե վերջ տուինք թէոդոսիոյ հաղար և երկերիւր տարուան համառօտ հին պատմութեան :

Հոնք քար քարի վերայ չմողլովի թէոդոսիա, կ'անցնին յԵւ-  
րոպա, որոց արժանաւոր առաջնորդը « Գաւաղանն բարկութեան  
Երկնից » Աստիլաս, ի ճանապարհին այլ շատ քաղաքներ ենթար-  
կելով թէոդոսիոյ ճակատագրին՝ կը հասնի իտալիա :

Հարիւր և աւելի ևս տարիներ, թէոդոսիա, նոյն և ամրող  
Տաւրիա՝ աւերակաց ներքե կը մնան :

504 ին կ'արշաւեն ի Տաւրիա յԱսիոյ Ռոդրացիք և Բուլղարք  
սոցա կարճառև տիրապետութեան վերջ կուտայ կայսրն Յուստիա-  
նոս Ա., գարձեալ զՏաւրիա Հռովմայեցւոց իշխանութեան են-  
թարկելով. ծովահայեաց շատ տեղուանք կայսեր շինել տուած  
բոլորածե բերդերուն, նոյն ձեռվ, աշտարակները ցարդ կանգուն  
կեցած են<sup>1</sup>.

Ի վերջին կէս Եղարու մի նոր ժողովուրդ ևս մուտ կը գործէ  
ի Տաւրիա, կաղար կամ խաղար անուամբ : Այս ազգը, համես-  
մատ իւր երկրագործ բարուց, երկար միջոց ժամանակի կը տի-  
րէ Տաւրիոյ գաշտային մասանց և Օրի գոնէն ևս գուրս կ'ընդար-  
ձակէ իւր իշխանութիւնը . տակաւ կը բաղմանան սոքա, այնպէս  
որ Տաւրիա, փոխելով անունը կաղարիա (Ghazaria) կամ խաղա-  
րաց աշխարհք կը կոչուի : Ասցա շահաստանը կը լինի մօտ այժ-  
մեան հին Ղրիմու, կաղարաթ, երբեմն կոչուած մեծ աւանը .  
մեքայժմայդ մեծ աւանին սակաւաւոր նշխարք կամ մնացորդք միայն  
կարող եմք նշմարել, ի հին – Ղրիմէ ցՍուտագ տանող ճանապար-  
հին վերայ, և այն գետնին հաւասարած հիմնեք և քարինք հին  
շէնքերու, որք մոտաւոր ապագային հետախաղալ պիտի կորչին. շը-  
մոռանամք աստ յիշելու որ՝ այդ մեծ աւանը ասկէ 200 տարի ա-  
ռաջ ծուխ համարուած էր Ա. Խաչ վանքին, որ բարձր լերան  
վերայէն կը գիտէր իւր լնդարձակ ծուխը, կաղարաթ մեծ աւա-  
նը : Այժմ գարձեալ կանգուն Ա. Խաչ իւր տեղ, և անցեալ<sup>2</sup> տա-  
րի վայելապէս նորոգուած, ի ձեռն գերապատիւ վարդապետին  
Խորէն Ստեփանէի, փոխանակ մեծ աւանին, գեղեցիկ ձորերուն

1 Խնչուէս ի Հալուշգա, Վրիմու հարաւային ափանց վերայ :  
2 1890 :

և հովիտներու վերայ միայն կը տիրէ , որք ժամանակաւ բիւրաւոր Հոյոց տեղի բնակութեան եղած են : Մեք այնպէս կ'ենթադրեմք , որ կաղարաց բնակութեան միջոց ի Տաւրիա , գաղթած լինին աստ բազմաթիւ հայ ժողովուրդ , և ունեցել են իրենց եկեղեցիները և վաճքերը . այս ենթադրութեանս պատճառները , զատ առանձին գլխով կ'աւանդեմք ի ասորե , ի գիտութիւն սիրողաց ազգիս հին գաղթականաց պատճութեան :

Ի մետասաներորդ դարու կը դիմեն ի Տաւրիա Պեշենէգ և Կոման կոչուած ազգերը , զորս կը հալածեն Մոնղոլ Թաթարք , 200 ին վերջերը , առաջնորդութեամբ քաջակորով Բագու խանին , որ էր թոռն , ի պատճութեան նշանաւոր Զինդիզ խանին , հասասողի զիշխանութիւն Խըզչախաց , առկի – ջոկատին :

Բագու՝ Թէոդոսիոյ մօտաւոր , Սոլդայա , այժմ Սուտաղ կոչուած Հովտին եղերք , ապակեր սարերու վերայ կը հաստատէ իւր աթոռուր , որոյ ստորոտը կը խորտակին անզուսպ ալիք Մե ծովու . և ժամանակ առ ժամանակ ասպատակ կու ափոէ հեղեղօրէն դէպ ի Լեհ հաստան և ի Ռուսաստան , և գերելով գերփելով այն աշխարհները , նոցա կանայք և գասերք Սոլդայայ և Թէոդոսիոյ հրապարակաց վրայ ամօթալից և նախատեալ կը սպասեն գերեհան Հայերու , որ գան և արծաթով գնելով ազատեն զիրենք այդ տառապանաց վիճակէն , և տանին իրենց ընտանեաց մօտ :

Բագուի թոռը Մանգու – Դէմիր , իւր որդւոց մէջ կը բաժանէ թերակղզիս , և Օրան – Դէմիրի ժառանգութիւն կ'ինկնայ Սուրխաթ քաղաքէն մինչե թէոդոսիոյ ափունքը 1266ին : Սուրխաթ կը լինի մայրաքաղաք Օրան – Դէմիրի . և սորա իշխանութեան միջոց կը փոխուի նորա անունը ի Ղրիմ կամ Քըռըմ . և ուրովհետե ժամանակ անցնելէն վերջ , բոլոր թերակղզւոյն անուն կը դառնայ Քըռըմ , որպէս զի մասը բոլորէն զանազանի , Հին մակդիրը կը գնեն քաղաքին վերայ , կոչելով Օրան – Դէմիրի մայրաքաղաքը Հին կամ Էսկի – Քըռըմ : Աւշադրութեան արժանի է , որ Սուրխաթի անուանափոխութենէն իրը 300 տարի առաջ թէոդոսիոս ևս փոխել է անոնք և սկսել է կուա – կաֆա կոչուիլ : Ասերեք անուանց վերայ , այն է Սուրխաթ , կաֆա և Ղրիմ առանձին գլխով պիտի խօսիմք , բացարելով նոցա ծագումը կամ սուոզարանութիւնը :

### Շարունակելի

1 Ինչպէս Օվանէս Պոկառնովիք 1579ին : Տես ի Բազմավէտ 1885 , էջ 106 :